Հրանտ Մաթևոսյան

Թախիծ

Սարվորը հնձվորին մածուն է բերում, հնձվորը սարվորին՝ կարտոֆիլ: Սարվորը վերևում է, հնձվորը՝ հովտում: Սարից բերելը հեշտ է: Հովտից ձին փրփուր կաթելով է բարձրանում վեր: Հետիոտն բեռ տանելն անմտություն է: Բեռը կարտոֆիլ պիտի լիներ՝ զառիվերի գլխին կա: Տնտեսությանն է, չի կարելի, բայց զառիվերի գլխին է, ուրթին մոտիկ: Պահակ կա, բայց ախար լավ կարտոֆիլ է խոճկորների պես սպիտակ ու խոշոր: Հետո, ախար, զառիվերը, շալակո՜վ... Ձի՛ն է փրփուր կաթում:

Կգնաս առանց շալակի, զառիվերի գլխին կարտոֆիլի ցանք կա, այնտեղից կշարունակես շալակով: Պահակն Ադամ քեռին է:

Եվ օգոստոսի սկզբներից, հենց որ կարտոֆիլն ուտելի էր դառնում, դաշտը մի կողմից սկսում էր սևանալ, դա մածնի հատուցումն էր:

Պահակ Ադամ քեռուն ասում են, որ լավ չի պահակություն անում: Համաձայնում է: Պարտավորեցնում են, որ աչալուրջ լինի: Պարտավորվում է: Բայց սևը շարունակում է մեծանալ և, մինչև քոչի սարից իջնելը, բռնում է դաշտի կեսը: Որոշում են, որ ճամփի վրա, ուրթի տակ, էլ կարտոֆիլ չեն ցանի: Բայց, ախար, սար գնացողը մեղք կլիներ. գյուղից շալակեր տաներ սար և տարածը լիներ մանր, անպետք, ջրուտ կարտոֆիլ: Անխղճություն կլիներ: Նորից ցանում են և, որովհետև ճամփի վրա է լինում, պահակ են դնում: Պա հակը նորից լինում է Ադամ քեռին: Եվ՝ անցյալ, նախանցյալ տարվա, տասնամյակների պատմությունը:

Այս անգամ Ադամ քեռուն շատ լուրջ զգուշացում են տալիս՝ հանելու սպառնալիքով: Մեղքն ընդունում է ղեկավարների առջև: Նաև մտքի մեջ է ընդունում մեղքը, որովհետև տնաշենները և տանու՛մ են կարտոլը, և ծիծաղում

պահակի վրա: Ոչ մի թուփ կարտոֆիլ, այս վճռով Ադամ քեռին դուրս է գալիս գրասենյակից, ճամփա ընկնում պահակատեղ, բայց, զառիվերը ձգելիս, քանի գնում՝ թուլանում է վճռականությունը: Ախար անտերը շատ է զառիվեր ու շատ է երկար, քամում, թողնում է առանց մի կաթիլ ջրի: Դե նախագահի պարտքն Է, որ բրիգադրին զգուշացնի, բրիգադրի պարտքն Է իրեն Ադամ քեռուն հիշեցնի, նրա պարտքն Էլ պարտավորվելն Է: Ինչպես նաև հնձվորի պարտքն Է սարվորին կարտոֆիլ տանել: Հո շալակո՞վ չպիտի տանի, հո նախագահն ու բրիգադիրը անհասկացո՞ղ չեն: Ձի՛ն Է փրփուր կաթում...
Զառիվերի գլխին այնքան նեկտարածաղիկ կա՛... Մի բռաչափ հովիտ Է, բայց այնքան ծաղիկ կա: Հենց որ հասնում ես՝ ռունգերիդ մեջ շուլալվում Է նեկտարածաղկի բուրմունքը:
Հովտից Ադամ քեռին դուրս Է գալիս հոգին խաղաղված, բեղերի ու ռունգերի մեջ տանելով հովտի բույրը: Մի քիչ դենը Սպիտակ աղբյուրն Է, բլթում Է քարի տակից, մի ակունքով, սառը և սառնությունից կապույտ երանգով, ու գլորվում Է ձորը: Ափերը միագույն կանաչ են, փափուկ: Բացարձակ անդորրի մեջ աղբյուրը դնգում Է ինչպես մանկան հեքիաթում:
Աղբյուրից քիչ դենը պահակի քողտիկն Է՝ կանաչ խոտով ծածկված, կանաչ աշխարհի հետ ձուլված-կորած: Մոտիկից Էլ չի երևում: Կարծես իսկի քողտիկ չկա, պահակ չկա: Կարտոֆիլն առանց պահակի Է:
Պահակ, անպայման, կար. գյուղը լուր ընկավ, որ Դանիելյան Ադամ քեռին մեկին բոթել Է՛... Կարտոֆիլ հանելիս Է եղել չի թողել, հրել Է, հետն Էլ ասել՝ «մարդ աստծո, հանրային կարտոլ Է, ես Էլ պահակ եմ, հո Էստեղ խրտվիլակ չեմ...»:
Հա՛, Ադամ քեռին մեկին ծեծել Է... Ուզեցին իմանալ՝ ինչ տեղն Է խփել, ինչպես Է խփել՝ օգնել Էր, միասին հանել Էին ու միասին հնարել, թե Ադամ քեռին մեկին բոթել Է՛, և նա շա՛տ նեղացել Է Ադամ քեռուց...